Հավելված 8

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 371-Ն որոշմամբ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի՝ 2011 թվականի դեկտեմբերի ___-ի թիվ ____ -Ն հրամանով

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահ՝

---------- Արթուր Ջավադյան
2011թվականի դեկտեմբերի ___

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար՝

---------- Վաչե Գաբրիելյան
2011 թվականի դեկտեմբերի ___

«ՖՅՈՒՉՐ ԿԱՊԻՏԱԼ ՄԱՐԿԵՏ» ՍՊԸ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՁԵՎ 5)

Առ 31.03.2026թ.

Ծանոթագրություն 1. «Իրավական դաշտ և կորպորատիվ կառավարում»

«Ֆյուչր Կապիտալ Մարկետ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) հիմնադրվել է 2005թ-ի հունիսի 8-ին և հանդիսանում է սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն՝ գործելով ՀՀ օրենսդրության շրջանակներում: 2005թ. օգոստոսի 5-ին Ընկերությանը տրամադրվել է բրոքերային գործունեության ԲԳ 0055 լիցենզիան:

Համաձայն 20.10.2007թ.-ին ընդունված «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի, 27.06.2008թ.-ին Ընկերությունը վերագրանցվել և վերալիցենզավորվել է որպես ներդրումային ընկերություն: ՀՀ Կենտրոնական բանկի կոդ 050.0121ԾՕՀ.27.06.08 որոշմամբ Ընկերությանը շնորհվել է ներդրումային ծառայությունների մատուցման ՆԸ 0004 լիցենզիան: ՀՀ Կենտրոնական բանկի կոդ 050.0205 Ա. 25.11.16 որոշմամբ Ընկերությանը տրվել է լրացուցիչ ներդրումային ծառայություն (արժեթղթերի փաթեթի կառավարում) մատուցելու լիցենզիա:

Ընկերությունը մասնաճյուղեր չունի, գտնվելու վայրը և փոստային հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, 0010, Բյուզանդի 1, տարածք 50:

31.03.2026թ. դրությամբ Ընկերությունն ունի 5 աշխատակից:

1.1. Ընկերության հիմնական գործունեությունը

Ընկերությունը գործունեություն է իրականացնում բացառապես ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրված ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիայով թույլատրվող հիմնական և ոչ հիմնական ներդրումային ծառայությունների տեսակներով, մասնավորապես՝ հաճախորդ-ներից արժեթղթերով գործարքների կատարման համար պատվերների ընդունում, իր կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարում, արժեթղթերի փաթեթի կառավարում, իր հաշվին և իր անունից արժեթղթերով գործարքների կատարում, արժեթղթերի երաշխավորված և չերաշխավորված տեղաբաշխման իրականացում, արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման կազմակերպման հետ կապված ծառայությունների մատուցում, ինչպես նաև արտարժույթի դիլերային առք ու վաճառքի գործառնությունների իրականացում:

1.2. Գործարար միջավայրը

Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները: Որպես զարգացող շուկա, Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Հետևաբար Հայաստանում ծավալված գործունեությունը կապված է որոշակի ռիսկերի հետ, որոնք բնորոշ չեն զարգացած երկրների շուկաներին: Նման ռիսկերը և դրանցից բխող հետևանքները կարող են ազդեցություն թողնել Ընկերության ապագա գործունեության վրա: Ներկայացված ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում որևէ ճշգրտումներ, որոնք կարող են առաջանալ նշված անորոշությունների՝ հետագայում որոշակի դառնալու արդյունքում: Նման ճշգրտումները, եթե այդպիսիք կլինեն, կարտացոլվեն Ընկերության ֆինանսական հաշվետվություններում այն ժամանակաշրջանում, երբ այդ ճշգրտումներն ի հայտ կգան և դրանք հնարավոր կլինի գնահատել:

Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում: Գնանշումները փոքր իրացվելի շուկաներում կարող են չհամընկնել ֆինանսական գործիքների իրական արժեքներին, ինչը հնարավոր կլիներ ակտիվ շուկայի դեպքում՝ միմյանց հետ գործարքների պատրաստ մեծ թվով վաճառողների և գնորդների պայմաններում:

1.3. Խմբի իրավական կառուցվածքը

Ընկերությունը որևէ խմբի անդամ չի հանդիսանում:

1.4. Կորպորատիվ կառավարում

Ընկերությունում չի ստեղծվել Խորհուրդ: Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը նրա մասնակիցների ընդհանուր ժողովն է, որն ունի կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք: 31.03.2026թ. դրությամբ ընդհանուր ժողովի իրավասություններն իրականացնում է Ընկերության միակ մասնակիցը:

Ընկերության գործադիր մարմինը բաղկացած է Ընկերության գործադիր տնօրեն Արեն Հակոբյանից և գլխավոր հաշվապահ Արփինե Խաչատրյանից (գրանցվել է ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 18.03.2026թ. թիվ 1/125 Ա որոշմամբ): Ընկերության գործունեության ներքին վերահսկողությունն իրականացվում է ներքին աուդիտոր Ռուբեն Մելքոնյանի կողմից:

31.03.2026թ. դրությամբ Ընկերության միակ մասնակիցն է հանդիսանում ՀՀ քաղաքացի Տիգրան Խանիկյանը (100%):

Ընկերությունը մեծ ուշադրություն է դարձնում կարգապահ և բարձր որակավորում ունեցող ղեկավարների առկայության ապահովմանը: Այդ կապակցությամբ Ընկերության գործադիր տնօրենի կողմից պարբերաբար ուսումնասիրվում է ՀՀ աշխատուժի շուկան՝ Ընկերության ղեկավարների վարձատրման մակարդակը (ներառյալ խրախուսմանն ուղղվող վճարները) պահպանելով առավելագույն մրցակցային սահմաններում:

Արտաքին աուդիտորի կողմից Ընկերության 2025 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվություններն աուդիտորական ստուգման ենթարկելու համար վճարվելու է 1 680 000 (Մեկ միլիոն վեց հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ գումար:

Ծանոթագրություն 2. «Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը»

1) Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը և ներկայացումը

Ընկերությունում հաշվապահական հաշվառումը վարվում և ֆինանսական հաշվետվությունները կազմվում են «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք), ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (այսուհետ՝ ՖՀՄՍ) և միջազգային ստանդարտների ուղեցույցներին համապատասխան, ինչպես նաև հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական այլ ակտերի համաձայն: Հաշվապահական հաշվառումը վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու որևէ հարցի վերաբերյալ ՖՀՄՍ-ներում և հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ իրավական ակտերում մոտեցումների բացակայության դեպքում Ընկերությունը մշակում է դրանք ինքնուրույն, ելնելով՝

ա. նման հարցերին առնչվող ՖՀՄՍ-ներով և հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ իրավական ակտերով սահմանված պահանջներից և ցուցումներից.

բ. Օրենքով սահմանված հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու սկզբունքներից, ֆինանսական հաշվետվությունների տարրերի սահմանումներից, ճանաչման չափանիշներից և չափման հիմունքներից.

գ. գործնական փորձից՝ այնքանով, որքանով դա համահունչ է սույն կետի «ա» և «բ» ենթակետերով սահմանված դրույթներին:

Ընկերությունում հաշվապահական հաշվառումը վարվում է՝

ա. ՀՀ արժույթով՝ հայկական դրամով, որն Ընկերության ինչպես ֆունկցիոնալ, այնպես էլ ներկայացման արժույթն է.

բ. կրկնակի գրանցման եղանակով՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2011թ. նոյեմբերի 30-ի թիվ 322-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի և ներդրումային ֆոնդերի կառավարիչների հաշվապահական հաշվառման հաշվային պլանին» և «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի և ներդրումային ֆոնդերի կառավարիչների հաշվապահական հաշվառման հաշվային պլանի կիրառման հրահանգին» համապատասխան.

գ. անընդհատ՝ Ընկերության պետական գրանցման պահից մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նրա վերակազմակերպումը կամ լուծարումը:

Ընկերությունը հաշվապահական հաշվառումը վարելիս և ֆինանսական հաշվետվությունները կազմելիս պահպանում է անընդհատության, հետևողականության, հաշվեգրման, հասկանալիության, էականության, միասնականության, հաշվանցման, արժանահավատության, համադրելիության և սահմանազատման սկզբունքները:

2) համախմբման սկզբունքները (համախմբման դեպքում)

Ընկերությունը որևէ կերպ հաշվետվություններ չի համախմբում, հետևաբար չունի համախմբման սկզբունքներ:

3) եկամտի և ծախսերի հիմնական տեսակների ճանաչումը

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն և ստացված եկամուտը կարելի է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Ընկերությունից և ծախսը կարելի է արժանահավատորեն չափել:

Ընկերության կողմից գնված արժեթղթերից ստացվելիք տոկոսները վերագրվում են եկամուտներին յուրաքանչյուր աշխատանքային օր (տոկոսների հաշվարկման համար հիմք են հանդիսանում արժեթղթերի թողարկման պայմանները): Ոչ աշխատանքային օրերի համար ստացվելիք տոկոսները վերագրվում են եկամուտներին դրանց հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Տեղաբաշխված ավանդներից ստացվելիք տոկոսները վերագրվում են եկամուտներին յուրաքանչյուր աշխատանքային օր (տոկոսների հաշվարկման համար հիմք են հանդիսանում համապատասխան պայմանագրերը): Ոչ աշխատանքային օրերի համար ստացվելիք տոկոսները վերագրվում են եկամուտներին դրանց հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Ընկերության կողմից ռեպո համաձայնագրերով ստանձնած պարտավորությունների գծով վճարվելիք տոկոսները ծախս են ճանաչվում յուրաքանչյուր աշխատանքային օր: Ոչ աշխատանքային օրերի համար վճարվելիք տոկոսները վերագրվում են ծախսերին դրանց հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Ստացված վարկերի դիմաց վճարվելիք տոկոսները վերագրվում են ծախսերին յուրաքանչյուր աշխատանքային օր (տոկոսների հաշվարկման համար հիմք են հանդիսանում համապատասխան պայմանագրերը): Ոչ աշխատանքային օրերի համար վճարվելիք տոկոսները վերագրվում են ծախսերին դրանց հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Կոմիսիոն եկամուտները և ծախսերը ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով՝ ծառայությունների մատուցման ընթացքում:

Շահութաբաժիններից եկամուտը ճանաչվում է, երբ Ընկերության՝ վճարը ստանալու իրավունքը հաստատված է:

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիան, աշխատավարձերը, վարձավճարները և այլ հաշվեգրումները կատարվում են յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը:

4) արտարժութային գործառնությունների հաշվառումը

Արտարժույթով կատարված գործարքները հաշվառվում են ՀՀ դրամով՝ կիրառելով գործարքի օրվա համար ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքը (այսուհետ՝ փոխարժեք): Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերագնահատվում են յուրաքանչյուր աշխատանքային օր՝ կիրառելով տվյալ աշխատանքային օրվա փոխարժեքը: Արտարժութային գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից առաջացած եկամուտը և վնասը ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես արտարժույթի վերագնահատումից առաջացած օգուտ կամ կորուստ:

5) հարկեր (ընթացիկ և հետաձգված)

Շահութահարկը հաշվարկվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների համաձայն: Շահույթի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամուտից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարված հարկերի ճշգրտումները: Շահութահարկի գծով ծախսը հաշվարկվում է յուրաքանչյուր ամսվա վերջին օրը: Հետաձգված հարկերն առաջանում են ակտիվի կամ պարտավորության հաշվեկշռային արժեքի և դրա հարկային բազայի միջև եղած ժամանակավոր տարբերություններից: Ակտիվի կամ պարտավորության հարկային բազան դա գումար է, որը հարկային նպատակներով վերագրվում է այդ ակտիվին կամ պարտավորությանը:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

Ընկերությունն իր գործունեության ընթացքում վճարում է նաև այլ հարկեր, որոնք արտացոլվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

6) Ֆինանսական գործիքների ճանաչումը և գնահատումը

Ընկերությունը ֆինանսական ակտիվները և պարտավորություններն իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է միայն այն դեպքում, երբ դառնում է դրանք առաջացնող գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի իրականացմանն ուղղակիորեն առնչվող գործառնական ծախսերի գումարը:

Ընկերության կողմից ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ խմբերի՝ շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ, ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ, դեբիտորական պարտքեր և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ: Նման դասակարգումը կատարվում է ֆինանսական ակտիվների ձեռքբերման պահին՝ Ընկերության ղեկավարության կողմից սահմանված գնահատումների հիման վրա՝ հաշվի առնելով ձեռքբերման նպատակները:

7) դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են կանխիկ դրամից և այլ բանկերում հաշիվներից, որոնք կարող են փոխարկվել կանխիկի կարճ ժամանակահատվածում և չեն ենթարկվում արժեքի փոփոխման զգալի ռիսկի:

8) Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվը հաշվառվում է որպես շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող, եթե այն ձեռք է բերվում հիմնականում գների կամ դիլերային հավելագների կարճաժամկետ տատանումներից շահույթ ստանալու նպատակով:

Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթերը սկզբնական ճանաչման ժամանակ հաշվառվում են սկզբնական արժեքով, և յուրաքանչյուր աշխատանքային օր վերաչափվում իրական (շուկայական) արժեքով՝ համաձայն 9) կետում նկարագրված իրական արժեքի որոշման մեթոդների: Վերագնահատումից ստացված օգուտները (կորուստները) գրանցվում են Ընկերության համապարփակ եկամուտներում (ծախսերում)՝ որպես

շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների վերագնահատումից ստացված օգուտներ (առաջացած կորուստներ):

Ածանցյալ գործիքները դասակարգվում են որպես շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող, բացի այն դեպքերից, երբ դրանք օգտագործվում են հեջավորման նպատակով:

9) իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումները պարտքային, ինչպես նաև կապիտալի գործիքներում կատարված այն ներդրումներն են, որոնք Ընկերությունը մտադիր է պահել անորոշ ժամկետով, և որոնք կարող են վաճառվել իրացվելիության կարիքների բավարարման համար, ինչպես նաև տոկոսադրույքներում, փոխարժեքներում կամ բաժնետոմսերի գներում փոփոխությունների դեպքում:

Ընկերության իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող արժեթղթերը յուրաքանչյուր աշխատանքային օր վերագնահատվում են իրական (շուկայական) արժեքով: Իրական արժեքի փոփոխություններից առաջացած չիրացված շահույթը և/կամ վնասը վերագրվում է սեփական կապիտալի այլ համապարփակ եկամուտ բաժնին՝ որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների վերագնահատումից առաջացած չիրացված շահույթ կամ վնաս: Արժեթղթերի օտարման ժամանակ օտարման օրվա դրությամբ արժեթղթի հաշվեկշռային արժեքի և վաճառքի գնի միջև տարբերությունը գրանցվում է Ընկերության համապարփակ եկամուտներում (ծախսերում)՝ որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների ձեռքբերումից և/կամ վաճառքից ստացված օգուտ (առաջացած կորուստ):

Որպես շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող դասակարգված արժեթղթերի իրական (շուկայական) արժեքի որոշման մեթոդներն են՝

ա. ՀՀ պետական (գանձապետական) պարտատոմսերի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից թողարկված պարտատոմսերի համար արժեթղթի շուկայական արժեքը հաշվարկվում է հիմք ընդունելով եկամտաբերության կորը,

բ. Կարգավորվող շուկայում ցուցակված արժեթղթերի շուկայական արժեքը հաշվարկվում է որպես հաշվետու ամսաթվի դրությամբ այդ արժեթղթերով բորսայում հաստատված վերջին գործարքի գին կամ եկամտաբերություն (փակման գին կամ եկամտաբերություն), եթե գործարքի ամսաթվի և հաշվետու ամսաթվի միջև ժամկետը չի գերազանցում մեկ ամիս:

գ. Այն արժեթղթերի համար, որոնցով կարգավորվող շուկայում գործարքներ չեն իրականացվել կամ վերջին գործարքն իրականացել է ավելի քան մեկ ամիս առաջ, սակայն որոնց համար առկա է շուկա ստեղծող (մարքեթ մեյքեր), շուկայական արժեքը հաշվարկվում է հիմք ընդունելով շուկա ստեղծողի կողմից առաջարկվող տվյալ արժեթղթի գնանշումները: Ընդ որում, երկար դիրքի հաշվարկի ժամանակ հիմք է ընդունվում այն գինը կամ եկամտաբերությունը, որով արժեթուղթը կարող է վաճառվել, իսկ կարճ դիրքի հաշվարկի ժամանակ՝ այն գինը կամ եկամտաբերությունը, որով տվյալ արժեթուղթը կարող է գնվել:

դ. Այն պարագայում, երբ արժեթղթերի համար կիրառելի չեն շուկայական արժեքի հաշվարկման՝ սույն կետի «ա» - «գ» պարբերություններով սահմանված եղանակները, այսինքն՝ եթե գնանշված շուկայական գինն առկա չէ, այդ դեպքերում արժեթղթերը վերագնահատվում են տարեկան մեկ անգամ՝ յուրաքանչյուր տարվա վերջին աշխատանքային օրը՝ գնային մոդելների, զեղչված դրամական հոսքերի տեխնիկայի, ինչպես նաև շուկայական գնի հաշվարկման համար նպատակահարմար կամ գործնական համարվող այլ մեթոդների միջոցով: Հակառակ դեպքում, եթե արժեթուղթը գործող շուկայում չունի գնանշված շուկայական գին և դրա իրական արժեքը հնարավոր չէ արժանահավատորեն չափել, որպես արժեթղթի շուկայական արժեք ընդունվում է վերջինիս հաշվեկշռային արժեքը:

10) ռեպո համաձայնագրերով գործառնություններ

Ռեպո համաձայնագրերով ստացված միջոցները գրանցվում են «Ռեպո համաձայնագրեր» բաժնի համապատասխան ենթաբաժինների հաշիվներում: Ռեպո համաձայնագրերից առաջանում է տոկոսային ծախս, որը հաշվեգրվում է համաձայնագրի գործողության ժամկետի ընթացքում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով:

11) ածանցյալ ֆինանսական գործիքներ

Ածանցյալ գործիքները դասակարգվում են որպես շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և դրանց հաշվառումն իրականացվում է ֆինանսական գործիքների նախնական ճանաչման քաղաքականության համաձայն, այնուհետև դրանք վերաչափվում են իրական արժեքով: Դրական իրական արժեք ունեցող ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես ակտիվ, իսկ բացասական իրական արժեքով ածանցյալ գործիքները՝ որպես պարտավորություն: Նշված գործառնություններից արդյունքները հաշվառվում են որպես շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ակտիվներից կամ արտարժութային գործառնություններից շահույթ կամ վնաս՝ կախված ածանցյալ գործիքների բնույթից:

12) փոխառություններ՝ բանկերին, այլ ֆինանսական կազմակերպություններին, հաճախորդներին

Ընկերությունը չի զբաղվում նման գործառնություններով, հետևաբար այդպիսի հաշվառում Ընկերությունում չի տարվում:

13) փոխառությունների ու դեբիտորական պարտքերի արժեզրկման գծով կորուստների որոշման և անհուսալի փոխառությունների ու դեբիտորական պարտքերի դուրսգրման հիմունքը

Նման հիմունքներ Ընկերությունում մշակված չեն ((կետ 12)):

14) տոկոսների հաշվեգրման դադարեցումը

Տոկոսների հաշվեգրումը եկամուտների (ծախսերի) հաշիվներին դադարեցվում է, եթե ակտիվը (պարտավորությունը) սահմանված կարգի համաձայն դուրս է գրվում հաշվեկշռից:

15) ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների հաշվառումը

Ֆիքսված կամ որոշելի վճարումներով և ֆիքսված մարման ժամկետով արժեթղթերը դասակարգվում են որպես ամորտիզացված արժեքով հաշվառվող, երբ Ընկերությունը հաստատապես մտադրված է և հնարավորություն ունի պահել այդ ներդրումները մինչև դրանց մարման ժամկետի լրանալը: Եթե Ընկերության կողմից իրականացվում է մարման ժամկետին ոչ մոտ ակտիվների էական գումարի վաճառք, ապա ամբողջ դասը վերադասակարգվում է որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական

ակտիվների: Ամորտիզացված արժեքով հաշվառվող արժեթղթերը հաշվառվում են ամորտիզաց-ված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

16) հեջի հաշվապահական հաշվառումը

Հեջի հաշվապահական հաշվառումը զուգահեռաբար ճանաչում է հաշվանցման ազդեցությունը զուտ շահույթի կամ վնասի վրա, որն առաջանում է հեջինգային գործիքների և հեջավորվող հոդվածների իրական արժեքների փոփոխությունների հետևանքով:

17) ասոցիացված և դուստր կազմակերպություններում ներդրումների հաշվառումը

Ասոցիացված և դուստր կազմակերպություններում ներդրումները հաշվառվում են որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ՝ համաձայն 9) կետում նկարագրված սկզբունքների:

18) հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

<u>Հիմնական միջոցներ</u>

Հիմնական միջոցը, որը համապատասխանում է ակտիվի ճանաչման չափանիշներին, սկզբնապես չափվում է իր սկզբնական արժեքով: Հիմնական միջոցների միավորի սկզբնական արժեքն ընդգրկում է նրա գնման գինը, ներկրման տուրքերը, հարկերը և պարտադիր այլ վճարները, որոնք ենթակա չեն Ընկերությանը ետ վերադարձման, և ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած ծախս: Տրամադրված ցանկացած զեղչ և արտոնություն հանվում է գնման գնից: Հետագա ծախսերը, որոնք վերաբերում են արդեն ճանաչված հիմնական միջոցների միավորին, ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ կատարված ծախսերը բավարարում են հիմնական միջոցների՝ որպես ակտիվ ճանաչելու սկզբունքներին, այն է՝ ակնկալվում է ապագա տնտեսական օգուտների ներհոսք և արժեքը կարող է արժանահավատորեն չափվել: Մյուս բոլոր հետագա ծախսերը պետք է ճանաչվեն որպես հաշվետու ժամանակաշրջանի ծախսեր:

Սկզբնական ճանաչումից հետո հիմնական միջոցները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածություն և արժեզրկումից կորուստներ: Հիմնական միջոցների արժեքը փոխհատուցվում է դրանց մաշվածության հաշվեգրման միջոցով: Մաշվածության հաշվեգրումը սկսվում է այն պահից, երբ հիմնական միջոցը պատրաստ է շահագործման համար: Հիմնական միջոցների մաշվածության հաշվեգրման համար Ընկերությունը սահմանում է հետևյալ նորմերը.

Շենքերի և շինությունների համար	20 տարի
Հաշվողական և համակարգչային տեխնիկայի, հաղորդակ-ցական սարքավորանքի համար	5 տարի
Այլ հիմնական միջոցների համար	8 տարի

Հիմնական միջոցների մաշվածության գումարն իր օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխելու համար Ընկերությունը կիրառում է մաշվածության հաշվարկման գծային մեթոդը, որի համաձայն ակտիվի օգտակար ծառայության ընթացքում կատարվում են հավասարաչափ հատկացումներ:

Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական ճանաչման ժամանակ ձեռքբերման արժեքով: Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածություն և արժեզրկումից կորուստներ: Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ժամկետը որոշում է Ընկերությունը՝ ելնելով դրանց հնարավոր օգտագործման ժամկետներից: Եթե վերլուծելով առկա տեղեկատվությունը՝ հնարավոր չէ կանխատեսել ոչ նյութական ակտիվից սպասվող տնտեսական օգուտների սպառման ժամանակաշրջանը, ապա այն կհամարվի անորոշ օգտակար ծառայությամբ ոչ նյութական ակտիվ, որի համար ամորտիզացիա չի հաշվառվում:

Ոչ նյութական ակտիվների արժեքը փոխհատուցվում է դրանց մաշվածության հաշվեգրման միջոցով: Ոչ նյութական ակտիվների մաշվածության հաշվեգրման համար Ընկերությունը սահմանում է հետևյալ նորմերը.

Համակարգչային ծրագրեր	10 տարի
Այլ ոչ նյութական ակտիվներ	1 տարի

Ոչ նյութական ակտիվների մաշվածության գումարն իր օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխելու համար Ընկերությունը կիրառում է մաշվածության հաշվարկման գծային մեթոդը, որի համաձայն ակտիվի օգտակար ծառայության ընթացքում կատարվում են հավասարաչափ հատկացումներ:

19) հաճախորդների միջոցներ

Ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրի ներքո ստացված ակտիվներն արտացոլվում են հետհաշվեկշռում՝ ընթացիկ (վերականգնման) արժեքով, այսինքն դրամական միջոցների այն գումարի չափով, որը կվճարվեր, եթե ներկա պահին միևնույն կամ համանման ակտիվ ձեռք բերվեր, իսկ ներդրումային ծառայության մատուցման ընթացքում ձեռքբերված ակտիվները հետհաշվեկշռում արտացոլվում են սկզբնական (փաստացի) արժեքով, այսինքն՝ ձեռքբերման պահի դրությամբ դրանց ձեռքբերման համար վճարված կամ վճարվելիք դրամական միջոցների գումարով, այլ ձևով հատուցելու դեպքում՝ հատուցման իրական արժեքի չափով:

20) Ընկերության կողմից թողարկված պարտքային արժեթղթեր

Ընկերության կողմից դեռևս պարտքային արժեթղթեր չեն թողարկվել, ուստի նման հաշվառում Ընկերությունում դեռ չի տարվում:

21) տարբերակումն այն գործառնությունների և իրադարձությունների, որոնք հանգեցնում են հաշվեկշռում ակտիվների և պարտավորությունների ճանաչմանը, այն գործառնություն-ներից և իրադարձություններից, որոնք առաջացնում են միայն պայմանական դեպքեր և պայմանավորվածություններ

Հաշվեկշռում ակտիվների և պարտավորությունների ճանաչմանը հանգեցնող գործառնությունների և իրադարձությունների տարբերակումը պայմանական դեպքեր և պայմանավորվածություններ առաջացնող գործառնություններից և իրադարձություններից իրականացվում է ՖՀՄՍ-ների համաձայն:

22) ընդհանուր գործունեության ռիսկերի դիմաց կատարվող հատկացումների որոշման և դրանց հաշվապահական ձևակերպման հիմունքը

Ընդհանուր գործունեության ռիսկերի դիմաց կատարվող հատկացումների որոշումն ընդունվում է Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից, որն իրականացվում է Ընկերության զուտ շահույթից գլխավոր պահուստին կատարվող մասհանումներով:

23) կապիտալ և էմիսիոն եկամուտ

<u>Կապիտալ</u>

Ընկերության բաժնեմասերի անվանական արժեքների հանրագումարը դասակարգվում է որպես կանոնադրական կապիտալ: Եթե նոր բաժնեմասերի վաճառքի արդյունքում ստացված

գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնեմասերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես հավելավճար կամ էմիսիոն եկամուտ (հակառակ դեպքում՝ որպես զեղչ):

Գնված սեփական բաժնեմասեր

Ընկերության բաժնեմասերն Ընկերության կողմից գնման դեպքում սեփական կապիտալը նվազեցվում է վճարված գումարի չափով, ներառյալ գործառնությանը բնորոշ բոլոր ծախսերը՝ նվազեցված հարկերով, մինչև գործարքի չեղյալ համարվելը կամ վերաթողարկումը: Երբ գնված բաժնեմասերը վաճառվում են երրորդ կողմին կամ վերաթողարկվում են, ստացված գումարները ներառվում են կապիտալում: Գնված բաժնեմասերը հաշվառվում են միջին կշռված արժեքով:

Շահութաբաժիններ

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով շահութաբաժինները դուրս են գրվում կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն, միայն երբ դրանք հաստատվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով կամ մինչև այդ: Մինչև հաշվապահական հաշվեկշռի ամսաթիվը հայտարարված կամ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո, բայց մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը հայտարարված կամ հաստատված շահութաբաժինները բացահայտվում են:

24) փոխանակման փոխարժեքի որոշման մեթոդաբանությունը

Փոխանակման փոխարժեքը որոշվում է Ընկերության գործադիր տնօրենի կողմից՝ ֆինանսական համակարգում տիրող իրավիճակի ամենօրյա ուսումնասիրությունների հիման վրա:

25) Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվանցումը

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը ֆինանսական հաշվետվություններում ներկայացվում են հաշվանցված, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

26) Ֆինանսական ակտիվների վերադասակարգումները

Ակտիվների վերադասակարգումները կատարվում են հետագա մտադրությունների փոփոխմանը զուգընթաց՝ յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից հետո:

27) տեղեկատվություն սեգմենտների վերաբերյալ

Սեգմենտների վերաբերյալ տեղեկատվության բացահայտումն իրականացվում է ՖՀՄՍ-ների պահանջներին համապատասխան:

Հավաստիացնում ենք, որ Ընկերության ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին, հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ ակտերին, ինչպես նաև Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից 2019թ. մարտի 20-ին հաստատված՝ նոր խմբագրությամբ հաշվապահական հաշվառման քաղաքականությանը:

Ծանոթագրություն 3. «Տոկոսային և նմանատիպ եկամուտներ»

		Հաշվետու ժամանակաշրջան	**Նախորդ ժամանակաշրջան**
1.	**<u>Տոկոսային և նմանատիպ եկամուտներ</u>**		
1)	Տոկոսային եկամուտներ բանկային հաշիվներից և ներդրված ավանդներից	31	18
2)	Տոկոսային եկամուտներ արժեթղթերից	203 100	199 044
3)	Տոկոսային եկամուտներ փոխառություններից	-	-
4)	Տոկոսային եկամուտներ ռեպո համաձայնագրերից	-	-
5)	Տոկոսային եկամուտներ սվոպից	-	-
6)	Այլ տոկոսային եկամուտներ	-	-
7)	**Ընդամենը**	**203 131**	**199 062**
2.	**<u>Տոկոսային և նմանատիպ ծախսեր</u>**		
1)	Տոկոսային ծախսեր ներգրավված փոխառությունների և ստացված վարկերի դիմաց	-	-
2)	Տոկոսային ծախսեր ռեպո համաձայնագրերի գծով	143 594	146 960
3)	Տոկոսային ծախսեր սվոպի գծով	-	-

4)	Տոկոսային ծախսեր ներդրումային ընկերությունների կողմից թողարկված արժեթղթերի դիմաց	-	-
5)	Այլ տոկոսային ծախսեր	213	305
6)	**Ընդամենը**	**143 807**	**147 265**
3.	**Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ**	**59 324**	**51 797**

Ծանոթագրություն 4. «Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր»

		Հաշվետու ժամանակաշրջան	**Նախորդ ժամանակաշրջան**
1.	**Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ**		
1)	Արժեթղթերի փաթեթի կառավարման գծով միջնորդավճարներից	-	-
2)	Արժեթղթերով գործարքներից միջնորդավճարներից	-	-
3)	Խորհրդատվական ծառայությունների գծով միջնորդավճարներից	-	-
4)	Արժեթղթերի տեղաբաշխման գծով միջնորդավճարներից	-	-
5)	Այլ ներդրումային ծառայությունների գծով միջնորդավճարներից	-	-
6)	Պահառության գործունեությունից	-	-
7)	Այլ միջնորդավճարներ	7 077	12 497
8)	**Ընդամենը**	**7 077**	**12 497**

2.	**<u>Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր</u>**		
1)	Միջնորդավճարների գծով ծախսեր	5 706	6 484
2)	Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ	**1 371**	**6 013**

Ծանոթագրություն 5. «Եկամուտ շահութաբաժիններից»

	<u>Շահութաբաժիններ</u>	**Հաշվետու ժամանակաշրջան**	**Նախորդ ժամանակաշրջան**
1.	Սովորական բաժնետոմսերի գծով հայտարարված շահութաբաժիններ	-	-
2.	Սովորական բաժնետոմսերի գծով վճարված շահութաբաժիններ	-	-
3.	Արտոնյալ բաժնետմսերի գծով հայտարարված շահութաբաժիններ	-	-
4.	Արտոնյալ բաժնետմսերի գծով վճարված շահութաբաժիններ	-	-

Ծանոթագրություն 6. «Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից»

		Հաշվետու ժամանակաշրջան	**Նախորդ ժամանակաշրջան**
1.	**<u>Առևտրական նպատակներով պահվող ներդրումներից զուտ եկամուտներ</u>**		
1)	Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների առք ու վաճառքից զուտ եկամուտ	-	-
2)	Շահույթի կամ վնասի միջոցով	-	-

	վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխությունից զուտ եկամուտ		
3)	**Ընդամենը**	**-**	**-**
2.	**<u>Վաճառքի համար մատչելի ներդրումներից զուտ եկամուտներ</u>**		
1)	Վաճառքի համար մատչելի ներդրումների առք ու վաճառքից զուտ եկամուտ	-	-
2)	Վաճառքի համար մատչելի ներդրումների իրական արժեքի փոփոխությունից զուտ եկամուտ	-	-
3)	**Ընդամենը**	-	-
3.	**<u>Արտարժութային գործառնություններից զուտ եկամուտներ</u>**		
1)	Արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտ	-	-
2)	Արտարժույթի վերագնահատումից ստացված զուտ եկամուտ	(1)	(1)
3)	Ընդամենը	**(1)**	**(1)**
4.	**Ընդամենը զուտ եկամուտ առևտրային գործառնություններից**	**(1)**	**(1)**

Ծանոթագրություն 7. «Այլ գործառնական եկամուտ»

	<u>Այլ գործառնական եկամուտ</u>	**Հաշվետու ժամանակաշրջան**	**Նախորդ ժամանակաշրջան**

1.	Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարումից ստացված զուտ եկամուտներ	-	-
2.	Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից և արժեզրկման հակադարձումից զուտ եկամուտներ	-	-
3.	Այլ եկամուտներ	-	29
4.	**Ընդամենը**	**-**	**29**

Ծանոթագրություն 8. «Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին»

		Հաշվետու ժամանակաշրջան	**Նախորդ ժամանակաշրջան**
1.	**<u>Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով</u>**		
1)	Պահուստի սկզբնական մնացորդ	-	-
2)	Պահուստին կատարված մասհանումներ	-	-
3)	Պահուստին կատարված մասհանումների վերադարձ	-	-
4)	Պահուստին կատարված զուտ մասհանումներ	-	-
5)	Նախկինում հետհաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ	-	-
6)	Պահուստի օգտագործում	-	-
7)	Պահուստի վերջնական մնացորդ	-	-

2.	**<u>Հաճախորդների նկատմամբ պահանջների գծով</u>**		
1)	Պահուստի սկզբնական մնացորդ	-	-
2)	Պահուստին կատարված մասհանումներ	-	-
3)	Պահուստին կատարված մասհանումների վերադարձ	-	-
4)	Պահուստին կատարված զուտ մասհանումներ	-	-
5)	Նախկինում հետհաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ	-	-
6)	Պահուստի օգտագործում	-	-
7)	Պահուստի վերջնական մնացորդ	-	-
3.	**<u>Ներդրումների գծով</u>**		
1)	Պահուստի սկզբնական մնացորդ	-	-
2)	Պահուստին կատարված մասհանումներ	-	-
3)	Պահուստին կատարված մասհանումների վերադարձ	-	-
4)	Պահուստին կատարված զուտ մասհանումներ	-	-
5)	Նախկինում հետհաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ	-	-
6)	Պահուստի օգտագործում	-	-
7)	Պահուստի վերջնական մնացորդ	-	-
4.	**<u>Այլ ակտիվների գծով</u>**		
1)	Պահուստի սկզբնական մնացորդ	-	-
2)	Պահուստին կատարված մասհանումներ	-	-
3)	Պահուստին կատարված մասհանումների	-	-

	վերադարձ		
4)	Պահուստին կատարված զուտ մասհանումներ	-	-
5)	Նախկինում հետհաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ	-	-
6)	Պահուստի օգտագործում	-	-
7)	Պահուստի վերջնական մնացորդ	-	-

Ծանոթագրություն 9. «Ընդհանուր վարչական ծախսեր»

	<u>Ընդհանուր վարչական ծախսեր</u>	**Հաշվետու ժամանակաշրջան**	**Նախորդ ժամանակաշրջան**
1.	Ծախսեր հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների գծով	9 905	13 803
2.	Ծախսեր սոցիալական ապահովության վճարների գծով	-	-
3.	Գործուղման և ուսուցման գծով ծախսեր	-	-
4.	Անձնակազմի այլ ծախսեր	-	-
5.	Գործառնական վարձակալության գծով ծախսեր	-	-
6.	Ներդրումային ընկերության շենքի և սարքավորումների, փոխադրամիջոցների տեխնիկական սպասարկման և պահպանման գծով ծախսեր	721	759
7.	Աուդիտի և այլ խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր	1 260	2 560
8.	Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	586	589

9.	Գրասենյակային և կազմակերպչական ծախսեր	361	426
10.	Տրանսպորտային ծախսեր	-	-
11.	Այլ վարչական ծախսեր	657	657
12.	**Ընդամենը**	**13 490**	**18 794**

Ընկերության աշխատակիցների միջին թվաքանակը հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ կազմում է 5 աշխատող, իսկ մեկ աշխատողին բաժին ընկնող միջին ամսական աշխատավարձի չափը կազմում է 597 037 ՀՀ դրամ: Նախորդ ժամանակաշրջանի համար այս թվերը համապատասխանաբար կազմում էին 5 աշխատող և 538 858 ՀՀ դրամ մեկ աշխատողին բաժին ընկնող միջին ամսական աշխատավարձ:

Ծանոթագրություն 10. «Այլ գործառնական ծախսեր»

	Այլ գործառնական ծախսեր	**Հաշվետու ժամանակաշրջան**	**Նախորդ ժամանակաշրջան**
1.	Հասարակական կապերի գծով ծախսեր	74	302
2.	Հիմնական միջոցների ամորտիզացիոն ծախսեր	1 255	1 220
3.	Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ծախսեր	-	-
4.	Այլ ծախսեր	23	69
5.	**Ընդամենը**	**1 352**	**1 591**

Ծանոթագրություն 11. «Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներից զուտ շահույթ (վնաս)»

	Այլ անձանց կանոնադրական	**Հաշվետու**	**Նախորդ**

	<u>կապիտալում ներդրումներից զուտ եկամուտ</u>	**ժամանակաշրջան**	**ժամանակաշրջան**
1.	Ասոցիացված կազմակերպություններում ներդրումներից	-	-
2.	Համատեղ վերահսկվող միավորներում ներդրումներից	-	-
3.	Դուստր ներդրումային ընկերություններում ներդրումներից	-	-
4.	Այլ դուստր ընկերություններում ներդրումներից	-	-
5.	Ընդամենը	-	-

Ծանոթագրություն 12. «Շահութահարկի գծով ծախս»

	<u>Շահութահարկի գծով ծախս</u>	**Հաշվետու ժամանակաշրջան**	**Նախորդ ժամանակաշրջան**
1.	Ընթացիկ հարկի գծով ծախս	8 269	6 757
2.	Տվյալ ժամանակաշրջանում ճանաչված՝ նախորդ ժամանակաշրջանների ընթացիկ հարկի ճշգրտումները	-	-
3.	Հետաձգված հարկի գծով ծախս	-	-
4.	**Ընդամենը**	**8 269**	**6 757**

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 18% (2025թ.՝ 18%):

		Հաշվետու ժամանակաշրջան	**Արդյունավետ դրույքաչափ (%)**	**Նախորդ ժամանակաշրջան**	**Արդյունավետ դրույքաչափ (%)**
1.	Շահույթը մինչև հարկումը	45 852	-	37 453	-
2.	Շահութահարկ՝	-	18	-	18

	դրույքաչափով				
3.	Հարկման նպատակով եկամուտների և ծախսերի ճշգրտումներ ոչ ժամանակավոր տարբերությունների գծով	86	-	86	-
4.	Չհարկվող եկամուտներ	(2)	-	(2)	-
5.	Չնվազեցվող ծախսեր	88	-	88	-
6.	Նախորդ տարվա հաշվարկված հարկային ծախսի ճշտում	-	-	-	-
7.	Շահութահարկի գծով ծախս	8 269	-	6 757	-

Հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ Ընկերությունն ունեցել է 45 852 հազ. ՀՀ դրամի հաշվապահական շահույթ, իսկ առկա մշտական տարբերությունների հետևանքով (ՀՀ Հարկային Օրենսգրքի համաձայն առկա 2 հազ. ՀՀ դրամի չհարկվող եկամուտներ և 88 հազ. ՀՀ դրամի չնվազեցվող ծախսեր) դիտարկվող ժամանակահատվածում հարկային նպատակներով Ընկերության շահույթը կազմել է 45 938 հազ. ՀՀ դրամ, որից էլ հաշվարկվել է շահութահարկի գծով ծախսի գումարը:

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկը.

		Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի դրությամբ	**Ֆինանսական արդյունքներով ճանաչված**	**Սեփական կապիտալում ճանաչված**	**Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ**
1.	*Հետաձգված հարկային ակտիվներ, այդ թվում՝*	-	-	-	-
1)	Շահույթի կամ վնասի	-	-	-	-

	միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով				
2)	Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով	-	-	-	-
3)	Հիմնական միջոցների գծով	-	-	-	-
4)	Այլ ակտիվների գծով	-	-	-	-
5)	Ստեղծված պահուստների գծով	-	-	-	-
6)	Այլ պարտավորությունների գծով	-	-	-	-
2.	*Հետաձգված հարկային պարտավորություններ, այդ թվում՝*	62 066	-	3 139	65 205
1)	Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով	-	-	-	-
2)	Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով	62 066	-	3 139	65 205
3)	Հիմնական միջոցների գծով	-	-	-	-
4)	Այլ ակտիվների գծով	-	-	-	-
5)	Այլ պարտավորությունների գծով	-	-	-	-
3.	*Զուտ հետաձգված հարկային ակտիվ/պարտավորություն*	**(62 066)**	**-**	**(3 139)**	**(65 205)**

Ծանոթագրություն 13. «Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ»

	Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	**Հաշվետու ժամանակաշրջան**	**Նախորդ ժամանակաշրջան**
1.	Հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթ հարկումից հետո	37 583	30 696
Ընկերության առանցքային կառավարչական անձնակազմի անդամների (գործադիր տնօրեն, ՀԿԴ ծառայությունների միջնորդավորման բաժնի ղեկավար – հաշվապահ և ներքին աու-դիտոր) հատուցումներին (այդ թվում՝ վճարված աշխատավարձ, վճարովի տարեկան արձակուրդ, պարգևավճար) 2026թ.-ի առաջին եռամսյակի ընթացքում հաշվեգրվել է 6 714 283 (Վեց միլիոն յոթ հարյուր տասնչորս հազար երկու հարյուր ութսուներեք) ՀՀ դրամ: Մասնավորապես, Ընկերու-թյան գործադիր տնօրենը ստացել է 2 086 287 (Երկու միլիոն ութսունվեց հազար երկու հարյուր ութսունյոթ) ՀՀ դրամ, ՀԿԴ ծառայությունների միջնորդավորման բաժնի ղեկավար – հաշվապա-

հը՝ 1 659 010 (Մեկ միլիոն վեց հարյուր հիսունինը հազար տաս) ՀՀ դրամ, իսկ ներքին աուդիտորը՝ 2 968 986 (Երկու միլիոն ինը հարյուր վաթսունութ հազար ինը հարյուր ութսունվեց) ՀՀ դրամ:

Ընկերության առանցքային կառավարչական անձնակազմի անդամների (գործադիր տնօրեն, ՀԿԴ ծառայությունների միջնորդավորման բաժնի ղեկավար – հաշվապահ և ներքին աուդիտոր) հատուցումներին (այդ թվում՝ վճարված աշխատավարձ, վճարովի տարեկան արձակուրդ, պարգևավճար) 2025թ.-ի ընթացքում հաշվեգրվել է 34 255 975 (Երեսունչորս միլիոն երկու հարյուր հիսունհինգ հազար ինը հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամ: Մասնավորապես, Ընկերության գործադիր տնօրենը ստացել է 11 923 338 (Տասնմեկ միլիոն ինը հարյուր քսաներեք հազար երեք հարյուր երեսունութ) ՀՀ դրամ, ՀԿԴ ծառայությունների միջնորդավորման բաժնի ղեկավար – հաշվապահը՝ 8 079 412 (Ութ միլիոն յոթանասունինը հազար չորս հարյուր տասներկու) ՀՀ դրամ, իսկ ներքին աուդիտորը՝ 14 253 225 (Տասնչորս միլիոն երկու հարյուր հիսուներեք հազար երկու հարյուր քսանհինգ) ՀՀ դրամ:

	Պահանջներ այլ ներդումային ընկերությունների նկատմամբ	**Հաշվետու ժամանակաշրջան**	**Նախորդ ժամանակաշրջան**
1.	Մնացորդը առ 1 հունվարի	-	-
2.	Տարվա ընթացքում ավելացում	-	-
3.	Տարվա ընթացքում նվազում	-	-
4.	Մնացորդը 31 դեկտեմբերի դրությամբ	-	-

	Հաճախորդների նկատմամբ պահանջներ	**Հաշվետու ժամանակաշրջան**	**Նախորդ ժամանակաշրջան**
1.	**Մնացորդը առ 1 հունվարի**	-	-
2.	**Տարվա ընթացքում պահանջների աճ**	-	-
3.	**Տարվա ընթացքում մարված պահանջներ**	(-)	(-)
4.	**Մնացորդը 31 դեկտեմբերի դրությամբ**	-	-
5.	**Տոկոսային եկամուտ**	-	-

	Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	**Հաշվետու ժամանակաշրջան**	**Նախորդ ժամանակաշրջան**
1.	**Մնացորդը առ 1 հունվարի**	-	-
2.	**Տարվա ընթացքում ստացված գումարներ**	-	-
3.	**Տարվա ընթացքում վճարված գումարներ**	(-)	(-)
4.	**Մնացորդը 31 դեկտեմբերի դրությամբ**	-	-
5.	Տոկոսային ծախս	-	-

Ծանոթագրություն 32. «Ֆինանսական ռիսկերի վերաբերյալ նվազագույն բացահայտումներ»

Ներդրումային գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանություն և այդ գործունեությունը ենթադրում է ռիսկերի որոշակի աստիճանի և համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում: Ռիսկի կրումը ֆինանսական գործունեության անբաժանելի մասն է, իսկ ռիսկերը գործունեության անխուսափելի հետևանքն են:

Ռիսկերի կառավարման գործընթացը կազմակերպվում է Ընկերության նպատակներին համահունչ, և հետապնդում է Ընկերությանը գործունեության ընթացքում հնարավոր ռիսկերից զերծ պահելու նպատակը: Ռիսկերի վերլուծությունը կազմում է Ընկերության ռազմավարական պլանավորման, ինչպես նաև ներդրումային ծրագրերի գնահատման անբաժանելի մասը: Ընկերությունում առկա են մի շարք ներքին կանոնակարգիչ փաստաթղթեր, որոնք վերջին հաշվով ուղղված են տարբեր ֆինանսական գործառնությունների կատարման ժամանակ ռիսկերի նվազեցմանը:

Ընկերությունն իր գործունեության ընթացքում բախվում է տարբեր տիպի ռիսկերի հետ: Հաշվետու ժամանակաշրջանում առավել կարևոր ռիսկեր են հանդիսացել.

Վարկային ռիսկ: Այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքի մի կողմը չի կատարի իր պարտականությունը, և այդ պատճառով մյուս կողմը կկրի ֆինանսական կորուստներ:

Տոկոսադրույքների փոփոխման ռիսկ: Տոկոսադրույքի ռիսկը ծագում է այն հավանականությունից, որ տոկոսադրույքների փոփոխություններն ուղղակիորեն կազդեն Ընկերության ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա: Տոկոսադրույքների փոփոխման ռիսկի գնահատման նպատակով կատարվում է ՀՀ ֆոնդային շուկայի և իրական հատվածի զարգացման միտումների վերաբերյալ մշտական վերլուծություն:

Արտարժութային ռիսկ: Արտարժույթի ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքներում փոփոխությունների հետևանքով: Վերջին տարիների ընթացքում դրամի նկատմամբ նկատվող դոլարի շարունակական արժեզրկման պարագայում Ընկերությունը նպատակահարմար էր գտել զերծ մնալ արտարժութային գործառնություններից: Սակայն 2009թ.-ի առաջին եռամսյակում կատարված իրադարձությունների հետևանքով Ընկերությունը մտավ արտարժութային շուկա՝ գրավելով երկար դիրք: Կանխատեսելով դոլարի հնարավոր արժեզրկում՝ Ընկերությունը 2012թ.-ից սկսեց հանդես գալ որպես վարկառու՝ վերցնելով արտարժութային կարճաժամկետ վարկեր: Սակայն, ինչպես և նախորդ հաշվետու ժամանակահատվածի վերջին, 31.03.2026թ. դրությամբ Ընկերությունը չունի արտարժույթով արտահայտված պարտավորություն:

Իրացվելիության ռիսկ: Իրացվելիության ռիսկը պայմանավորված է Ընկերության ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբ: Ընկերությունն իրացվելիության ռիսկի կառավարման նպատակով կանխատեսում է ֆինանսական շուկայում հնարավոր դրամի առաջարկի ավելցուկ և կառավարում է պարտավորություններն ըստ ժամկետայնության և ծավալների՝ ձգտելով հնարավորինս դիվերսիֆիկացնել և նվազեցնել ռիսկը: 2026թ. մարտի 31-ի դրությամբ Ընկերությունն ուներ շուրջ 28 731 հազ. ՀՀ դրամի դրամական ակտիվներ՝ բանկային հաշիվներին առկա միջոցներ (համախառն ակտիվների 0.3%-ը):

Շուկայական ռիսկ: Այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերը կամ իրական արժեքը կտատանվի այնպիսի շուկայական փոփոխականների պատճառով, ինչպիսիք են տոկոսադրույքները և արտարժույթի փոխարժեքները:

Գործառնական ռիսկ: Ընկերության կողմից բրոքերային գործունեություն իրականացնելու արդյունքում առաջացող ռիսկերի կանխարգելմանն ուղղված միջոցառումները ներառում են.

- հաճախորդի կողմից տրվող պատվերի ստուգում բրոքերի կողմից,

- Ընկերության աշխատակիցների մասնագիտական որակավորման բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում,
- կնքվող պայմանագրերի կրկնակի ստուգում:

<u>Վարկային ռիսկի վերլուծություն</u>

Վարկային ռիսկն Ընկերության կոնտրագենտների՝ իրենց կողմից ստանձնած պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու արդյունքում Ընկերության հաշվետու ժամանակահատվածի դրությամբ առկա ֆինանսական ակտիվներից առաջացող ապագա դրամական միջոցների մուտքերի կրճատման հավանականությունն է: Պարտականությունները չկատարելը հանգեցնում է ֆինանսական կորուստների առաջացման, որոնք ճանաչվում են Ընկերության համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Ընկերության՝ վարկային ռիսկին ենթարկվածության աստիճանն էական չի, քանի որ Ընկերության գործընկերներն են հանդիսանում ՀՀ ռեզիդենտ բանկերը, որոնք աչքի են ընկնում բարձր հուսալիությամբ, իսկ Ընկերության արժեթղթերի պորտֆելի ավելի քան 98.3%-ը բաղկացած է ՀՀ գանձապետական պարտատոմսերից:

Ընկերության ֆինանսական ակտիվների և պարտավորությունների աշխարհագրական կենտրոնացումների վերլուծությունն ունի հետևյալ տեսքը.

Հաշվետու ժամանակաշրջան

	Հոդվածի անվանումը	**Հայաստանի Հանրապետություն**	**Անկախ պետությունների համագործակցության (այսուհետ՝ ԱՊՀ) երկրներ**	**Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (այսուհետ՝ ՏՀԶԿ) երկրներ**	**Ոչ ՏՀԶԿ երկրներ**	**Ընդամենը**
1.	**Ակտիվներ**					
1)	**Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ Կենտրոնական բանկում**	-	-	-	-	-
2)	**Պահանջներ բանկերի և այլ ֆինանասական կազմակերպությունների նկատմամբ**	28 731	-	-	-	28 731
3)	**Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական**	-	-	-	-	-

	ակտիվներ					
4)	**Հաճախորդների նկատմամբ պահանջներ**	2 252	-	-	-	2 252
5)	**Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ**	5 324 169	-	-	-	5 324 169
6)	**Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ**	3 857 929	-	-	-	3 857 929
7)	**Այլ ակտիվներ**	21 406	-	-	-	21 406
8)	***Ընդամենը ակտիվներ***	9 234 487	-	-	-	9 234 487
2.	**Պարտավորություններ**					
1)	**Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանասական կազմակերպությունների նկատմամբ**	8 027 656	-	-	-	8 027 656
2)	**Պարտավորություններ հաճա խորդների նկատմամբ**	-	-	-	-	-
3)	***Ընդամենը պարտավորություններ***	8 027 656	-	-	-	8 027 656
3.	**Զուտ դիրք**	1 206 831	-	-	-	1 206 831

Նախորդ ժամանակաշրջան

	Հոդվածի անվանումը	**Հայաստանի Հանրապետություն**	**Անկախ պետությունների համագործակցության (այսուհետ՝ ԱՊՀ) երկրներ**	**Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (այսուհետ՝ ՏՀԶԿ) երկրներ**	**Ոչ ՏՀԶԿ երկրներ**	**Ընդամենը**
1.	**Ակտիվներ**					
1)	**Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ Կենտրոնական բանկում**	-	-	-	-	-
2)	**Պահանջներ բանկերի և այլ ֆինանասական կազմակերպությունների նկատմամբ**	32 241	-	-	-	32 241
3)	**Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ**	-	-	-	-	-
4)	**Հաճախորդների նկատմամբ պահանջներ**	1 105	-	-	-	1 105
5)	**Վաճառքի համար մատչելի**	5 196 253	-	-	-	5 196 253

	Ֆինանսական ակտիվներ					
6)	**Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ**	3 772 242	-	-	-	3 772 242
7)	**Այլ ակտիվներ**	22 494	-	-	-	22 494
8)	***Ընդամենը ակտիվներ***	9 024 335	-	-	-	9 024 335
2.	**Պարտավորություններ**					
1)	**Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանասական կազմակերպությունների նկատմամբ**	7 892 146	-	-	-	7 892 146
2)	**Պարտավորություններ հաճա խորդների նկատմամբ**	-	-	-	-	-
3)	***Ընդամենը պարտավորություններ***	7 892 146	-	-	-	7 892 146
3.	**Զուտ դիրք**	1 132 189	-	-	-	1 132 189

<u>Շուկայական ռիսկի վերլուծություն</u>

Շուկայական ռիսկն Ընկերության կողմից շուկայական գների փոփոխության հետևանքով կորուստներ կրելու վտանգ է, որը կապված է տոկոսադրույքների նկատմամբ զգայուն ակտիվների ու պասիվների և կապիտալի գործիքների դիրքերի հետ:

Շուկայական ռիսկն իր մեջ ներառում է արտարժութային և տոկոսադրույքի ռիսկերը: Արտարժութային ռիսկի կառավարումն իրականացվում է արտարժույթների փոխարժեքների փոփոխություններով պայմանավորված օգուտներ ստանալու (կորուստներ չկրելու) տեսանկյունից: Արտարժութային ռիսկի կառավարման գործընթացը ներառում է՝ արտարժութային շուկայի ուսումնասիրման, արտարժութային ռիսկի կանխատեսման, արտարժութային ռիսկի գնահատման՝ ռիսկի հնարավոր չափերի և հետևանքների որոշման, արտարժութային ռիսկի հետ կապված կորուստների կանխարգելման և նվազեցման փուլերը:

<u>Արտարժութային ռիսկ</u>

Ընկերությունում արժութային շուկայի վերլուծության գնահատականները տալիս է գործադիր տնօրենը, որն օրական հետևում է շուկայական զարգացումներին, հավաքագրում և ուսումնասիրում է փորձագիտական գնահատականները, կարճաժամկետ կանխատեսումներ է

անում շուկայի վարքագծի վերաբերյալ, բանակցություններ է վարում հաճախորդների և գործընկերների հետ իրենց սպասումների վերաբերյալ:

Վերլուծություններ իրականացնելիս կիրառվում է երկու մեթոդ՝ ֆունդամենտալ և տեխնիկական: Ֆունդամենտալ վերլուծությունը ենթադրում է շուկայի վերլուծություն՝ տնտեսությունը բնութագրող տարբեր ցուցանիշների դինամիկայի, ինչպես նաև քաղաքական իրադարձությունների, օրենսդրական դաշտի փոփոխությունների հիման վրա: Կանխատեսումների իրականացման համար հիմք են հանդիսանում երկարաժամկետ հատվածում փոխարժեքի վրա ազդող երկրի տնտեսական պայմանները: Տեխնիկական վերլուծությունը ենթադրում է գների նախկին դինամիկայի հիման վրա գների ապագա փոփոխությունների կանխատեսումը: Ուսումնասիրվում են փոխարժեքների տատանման միտումները կամ տրենդները, վերլուծության են ենթարկվում փոխարժեքների տատանումների դրսևորումները:

Ընկերությունը կրում է արտարժույթի ռիսկ՝ կապված արտարժույթի փոխարժեքի տատանումներով: Արտարժույթային ռիսկի կառավարման նպատակով Ընկերությունն իրականացնում է արտարժույթային ակտիվների և պասիվների կառուցվածքի վերլուծություն: Ստորև ներկայացվում է Ընկերության արտարժույթի ռիսկի վերլուծությունն ըստ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների.

Հաշվեկրու ժամանակաշրջան

		Հայաստանի Հանրապետության դրամ	**I խմբի արտարժույթ**	**II խմբի արտարժույթ**	**Ընդամենը**
1.	**Ակտիվներ**				
1)	**Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ Կենտրոնական բանկում**	-	-	-	-
2)	**Պահանջներ բանկերի և այլ ֆինանասական կազմակերպությունների նկատմամբ**	**28 640**	**91**	-	**28 731**
3)	**Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ**	-	-	-	-

4)	**Հաճախորդների նկատմամբ պահանջներ**	**2 252**	**-**	**-**	**2 252**
5)	**Վաճառքի համար մատչելի ֆինանասական ակտիվներ**	**5 324 169**	**-**	**-**	**5 324 169**
6)	**Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ**	**3 857 929**	**-**	**-**	**3 857 929**
7)	**Այլ**	**21 406**	**-**	**-**	**21 406**
8)	***Ընդամենը ակտիվներ***	**9 234 396**	**91**	**-**	**9 234 487**
2.	**Պարտավորություններ**				
1)	**Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանասական կազմակերպությունների նկատմամբ**	**8 027 656**	**-**	**-**	**8 027 656**
2)	**Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ**	**-**	**-**	**-**	**-**
3)	**Այլ պարտավորություններ**	**96 038**	-	-	**96 038**
4)	***Ընդամենը պարտավորություններ***	**8 123 694**	**-**	**-**	**8 123 694**
3.	**Զուտ դիրք**	**1 110 702**	**91**	**-**	**1 110 793**

Նախորդ ժամանակաշրջան

		Հայաստանի Հանրապետության դրամ	**I խմբի արտարժույթ**	**II խմբի արտարժույթ**	**Ընդամենը**
1.	**Ակտիվներ**				
1)	**Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ Կենտրոնական բանկում**	**-**	**-**	**-**	**-**
2)	**Պահանջներ բանկերի և այլ ֆինանասական կազմակերպությունների նկատմամբ**	**32 149**	**92**	**-**	**32 241**
3)	**Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ**	**-**	**-**	**-**	**-**

4)	**Հաճախորդների նկատմամբ պահանջներ**	**1 105**	**-**	**-**	**1 105**
5)	**Վաճառքի համար մատչելի ֆինանասական ակտիվներ**	**5 196 253**	**-**	**-**	**5 196 253**
6)	**Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ**	**3 772 242**	**-**	**-**	**3 772 242**
7)	**Այլ**	**22 494**	**-**	**-**	**22 494**
8)	***Ընդամենը ակտիվներ***	**9 024 243**	**92**	**-**	**9 024 335**
2.	**Պարտավորություններ**				
1)	**Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանասական կազմակերպությունների նկատմամբ**	**7 892 146**	**-**	**-**	**7 892 146**
2)	**Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ**	**-**	**-**	**-**	**-**
3)	**Այլ պարտավորություններ**	**74 338**	-	-	**74 338**
4)	***Ընդամենը պարտավորություններ***	**7 966 484**	**-**	**-**	**7 966 484**
3.	**Զուտ դիրք**	**1 057 759**	**92**	**-**	**1 057 851**

«I խմբի արտարժույթի» կազմը: Արտարժույթի առաջին խմբի մեջ մտնում են ՍԴՌ-ը, ՍԴՌ-ի զամբյուղի մեջ մտնող արտարժույթները (ԱՄՆ-ի դոլարը, եվրոն, ճապոնական իենը և անգլիական ֆունտ ստեռլինգը), շվեյցարական ֆրանկը, կանադական դոլարը, շվեդական կրոնը, դանիական կրոնը, ավստրալիական դոլարը և բանկային ոսկին:

«II խմբի արտարժույթի» կազմը: Արտարժույթի երկրորդ խմբի մեջ մտնում են այլ արտարժույթները:

Ստորև ներկայացվում է 31.03.2026թ. դրությամբ Ընկերության արտարժութային ռիսկի վերլուծությունն ըստ ածանցյալ ֆինանսական գործիքների տեսակների.

	Ածանցյալ ֆինանսական գործիքների տեսակները	**Հայաստանի Հանրապետության դրամ**	**I խմբի արտարժույթ**	**II խմբի արտարժույթ**	**Ընդամենը**
1.	**Ֆյուչերսային գործիքների գծով** **- պարտավորություններ** **- պահանջներ**	-	-	-	-

2.	**Ֆորվարդային գործիքների գծով** **- պարտավորություններ** **-պահանջներ**	-	-	-	-
3.	**Օպցիոնների գծով** **- պարտավորություններ** **- պահանջներ**	-	-	-	-
4.	**Սվոպերի գծով** **-պարտավորություններ** **-պահանջներ**	-	-	-	-
5.	**Այլ ածանցյալ գործիքների գծով** **- պարտավորություններ** **- պահանջներ**	-	-	-	-
6.	**Զուտ դիրք ըստ ածանցյալ ֆինանսական գործիքների**	-	-	-	-
7.	**Զուտ բաց դիրք** *(նախորդ աղյուսակում ստացված «Զուտ դիրք» փողի տվյալներից հանվում են «Զուտ դիրք ըստ ածանցյալ ֆինանսական գործիքների» փողի համապատասխան տվյալները)*	**1 110 702**	**91**	**-**	**1 110 793**

<u>Տոկոսադրույքի ռիսկ</u>

Տոկոսադրույքի ռիսկը տոկոսադրույքների փոփոխման հետևանքով Ընկերության կորուստներ կրելու հավանականությունն է, որը կապված է տոկոսադրույքների նկատմամբ զգայուն ակտիվների ու պասիվների բաց դիրքերի հետ, որի գնահատման համար կատարվում է տվյալ ակտիվների և պասիվների ժամկետային կառուցվածքի վերլուծություն:

Տոկոսադրույքի փոփոխությունն ուղղակիորեն ազդում է Ընկերության տոկոսային ռիսկի, ակտիվների ու պարտավորությունների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա: Ստորև ներկայացվում է Ընկերության հաշվետու ժամանակաշրջանի և նախորդ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ տոկոսաբեր/տոկոսակիր ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերլուծությունն ըստ տոկոսադրույքների վերանայման ժամկետների.

Հաշվետու ժամանակաշրջան

.	Հոդվածի անվանումը	մինչև 1 ամիս		1-ից մինչև 3 ամիս		3-ից մինչև 6 ամիս		6-ից մինչև 1 տարի		1-ից մինչև 5 տարի		5 տարուց ավելի	
		դրամով	իսկական արժեքով	դրամով	իսկական արժեքով	դրամով	իսկական արժեքով	դրամով	իսկական արժեքով	դրամով	իսկական արժեքով	դրամով	իսկական արժեքով
1.	Տեղաբաշխված միջոցներ												
1)	Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ, այդ թվում՝ -ավանդներ -ռեպո համաձայնագրեր -այլ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
2)	Հաճախորդների նկատմամբ պահանջներ, այդ թվում՝ - ռեպո համաձայնագրեր - այլ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
3)	Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ, այդ թվում՝ - երկարաժամկետ պարտքային գործիքներ - կարճաժամկետ պարտքային գործիքներ - բաժնային գործիքներ -այլ	-	-	-	-	-	-	-	-	1229 272	-	4094 897	-
4)	Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	-	-	-	-	-	-	-	-	3857 929	-	-	-
5)	Տեղաբաշխված այլ միջոցներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
6)	Ընդամենը	-	-	-	-	-	-	-	-	**5087 201**	-	**4094 897**	-
2.	Պարտավորություններ												
1)	բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ, այդ թվում՝		-	-	-	-	-	-	-	-	-	-	-

	- վարկեր - ռեպո համաձայնագրեր - այլ	8027 656											
2)	Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ, այդ թվում՝ - ռեպո համաձայնագրեր - այլ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
3)	Ներդրումային ընկերության կողմից թողարկված արժեթղթեր, այդ թվում՝ -փոխարկելի արժեթղթեր - այլ պարտատոմսեր - ստորադաս փոխառություններ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
4)	Ներգրաված այլ միջոցներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
5)	Ընդամենը	**8027 656**	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
3.	Զուտ դիրք	**(8027 656)**	-	-	-	-	-	-	-	**5087 201**	-	**4094 897**	-

Նախորդ ժամանակաշրջան

.	Հոդվածի անվանումը	մինչև 1 ամիս		1-ից մինչև 3 ամիս		3-ից մինչև 6 ամիս		6-ից մինչև 1 տարի		1-ից մինչև 5 տարի		5 տար ուց ավելի	
		իսկական	հաշվարկային	իսկական	հաշվարկային	իսկական	հաշվարկային	իսկական	հաշվարկային	իսկական	հաշվարկային	իսկական	հաշվարկային
1.	Տեղաբաշխված միջոցներ												
1)	Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ, այդ թվում՝ -ավանդներ -ռեպո համաձայնագրեր -այլ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
2)	Հաճախորդների նկատմամբ պահանջներ, այդ թվում՝ - ռեպո համաձայնագրեր	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-

	- այլ												
3)	**Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ, այդ թվում՝ - երկարաժամկետ պարտքային գործիքներ - կարճաժամկետ պարտքային գործիքներ - բաժնային գործիքներ -այլ**	-	-	-	-	-	-	-	-	1205 020	-	3991 233	-
4)	**Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ**	-	-	-	-	-	-	-	-	3772 242	-	-	-
5)	**Տեղաբաշխված այլ միջոցներ**	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
6)	**Ընդամենը**	-	-	-	-	-	-	-	-	**4977 262**	-	**3991 233**	-
2.	**Պարտավորություններ**												
1)	**բանկերի և այլ ֆինանասական կազմակերպությունների նկատմամբ, այդ թվում՝ - վարկեր - ռեպո համաձայնագրեր - այլ**	7892 146	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
2)	**Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ, այդ թվում՝ - ռեպո համաձայնագրեր - այլ**	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
3)	**Ներդրումային ընկերության կողմից թողարկված արժեթղթեր, այդ թվում՝ -փոխարկելի արժեթղթեր - այլ պարտատոմսեր - ստորադաս փոխառություններ**	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
4)	**Ներգրաված այլ միջոցներ**	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
5)	**Ընդամենը**	**7 892 146**	-	-	-	-	-	-	-	-	-	-	-

3.	**Զուտ դիրք**	**(7892 146)**	**-**	-	-	-	-	-	-	**4977 262**	-	**3991 233**	-

Ստորև ներկայացվում է Ընկերության կողմից հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ տոկոսաբեր/տոկոսակիր ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար գործող միջին տոկոսադրույքները.

	Հոդվածի անվանումը	**Հաշվետու ժամանակաշրջանի տոկոսադրույքներ**		**Նախորդ հաշվետու ժամանակաշրջանի տոկոսադրույքներ**	
		Հայաստանի Հանրապետության դրամ	**Արտարժույթ**	**Հայաստանի Հանրապետության դրամ**	**Արտարժույթ**
		%	%	%	%
1.	**Ակտիվներ**				
1)	**Մնացորդներ Կենտրոնական բանկում**	-	-	-	-
2)	**Պահանջներ բանկերի և այլ ֆինանասական կազմակերպությունների նկատմամբ, այդ թվում՝ - ռեպո համաձայնագրեր - սվոպ**	-	-	-	-
3)	**Հաճախորդների նկատմամբ պահանջներ**	-	-	-	-
4)	**Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ**	**9.89**	-	**9.89**	-
5)	**Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ**	**9.33**	-	**9.33**	-
2.	**Պարտավորություններ**				
1)	**Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանասական կազմակերպությունների նկատմամբ**	**7.24**	-	**7.27**	-
2)	**Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ**	-	-	-	-
3)	**Պարտավորություններ ներդրումային**	-	-	-	-

	ընկերության կողմից թողարկված արժեթղթերի գծով				

<u>Գնային ռիսկ</u>

Գնային ռիսկը ֆինանսական ակտիվի գնի փոփոխության հետ կապված ռիսկն է: Շուկայական գների փոփոխությունը մեծապես ազդում է ֆինանսական գործիքների արժեքի վրա, ընդ որում, այդ փոփոխությունները կարող են պայմանավորված լինել ինչպես առանձին արժեթղթերին կամ նրանց թողարկողներին հատուկ գործոններով, այնպես էլ շուկայում շրջանառվող բոլոր արժեթղթերի վրա ազդող ընդհանուր գործոններով:

<u>Իրացվելիության ռիսկ</u>

Իրացվելիության ռիսկն Ընկերության կողմից ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման ունակության մասնակի կամ ամբողջությամբ կորստի վտանգն է:

Իրացվելիության ռիսկերն ի հայտ են գալիս անբավարար իրացվելիության կամ շուկայականից առավել բարձր արժեքով ձեռք բերված իրացվելիության արդյունքում, ինչն այնուհետև ազդում է Ընկերության եկամուտներին և ծախսերին: Առաջանում է այն ժամանակ, երբ Ընկերությունը չի կարողանում վերահսկել պասիվների կրճատումը և ապահովել ակտիվների աճը:

Իրացվելիության ռիսկի կառավարումն ընթացիկ ժամանակաշրջանում կապված էր, առաջին հերթին, ակտիվների և պասիվների կառավարման արդյունավետ խնդրի լուծման, առավելագույն շահույթի ստացման հետ՝ պահպանելով իրացվելիության անհրաժեշտ մակարդակը:

Իրացվելիության ռիսկի կառավարումը ենթադրում է՝

1. կանխիկ հոսքի վերլուծություն
2. ակտիվների և պարտավորությունների դասակարգում ըստ պայմանագրային ժամկետների
3. շուկաների մոնիտորինգ:

Ընկերությունում իրացվելիության կառավարման հիմնական մեթոդ է հանդիսանում ակտիվների կառավարման մեթոդը:

Իրացվելիության առաջնային կառավարման մեթոդն է, որը և իրացվելիության գլխավոր աղբյուրն է՝ դա բացարձակ իրացվելի միջոցներն են՝ ՀՀ ռեզիդենտ բանկերի հաշիվներում մնացորդները:

Իրացվելիության երկրորդային կառավարման մեթոդն է՝ բարձր իրացվելի եկամտաբեր ակտիվներն են, որոնք կարճ ժամկետներում և նվազագույն կորուստների ռիսկով կարելի է վերափոխել կանխիկ դրամական միջոցների: Դրանք ձևավորվում են ՀՀ պետական գանձապետական արժեթղթերից:

Իրացվելիության կառավարման համար կիրառվում են նաև ակտիվների ու պարտավորությունների կառավարման այլ մեթոդներ, որոնցից են.

Իրացվելի ակտիվները վաճառելու մեթոդ. Իրացվելիության ցածր մակարդակի դեպքում Ընկերությունը դրամական միջոցներ ստանալու համար վաճառում է ակտիվներ:

Պարտավորությունների կառավարման մեթոդ. Ընկերությունն իրացվելիություն է ձեռք բերում ֆինանսական շուկայում ռեպոների և վարկերի միջոցով, ինչը ենթադրում է փոխառու միջոցների աղբյուրների փնտրման, դրանցից ամենահուսալիների (ներգրավման ամենաերկար ժամկետներ ունեցող) ընտրության և տարբեր պարտավորությունների ու ակտիվների միջև անհրաժեշտ օպտիմալ հարաբերակցությունների հաստատման գործընթացները:

Իրացվելիության կառավարման և վերահսկման համար Ընկերությունն ուղղորդվում է ընթացիկ և ժամկետային իրացվելիության սկզբունքներով: Ընկերությունն իրացվելիությունը կառավարում է տարբեր մեթոդների համակցման միջոցով՝ կախված արտաքին միջավայրի փոփոխությամբ՝ իրացվելիության լավագույն իրավիճակին հասնելու համար:

Ստորև ներկայացվում է Ընկերության ֆինանսական ակտիվների և պարտավորությունների բաշխումը՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվության ամսաթվից մինչև պայմանագրերում նշված մարմանը մնացած ժամկետների:

Հաշվետու ժամանակաշրջան

	ԱԿՏԻՎՆԵՐ	***Մարմանը մնացել է***					***Անժամկետ***	***Ընդամենը***
		մինչև 1ամիս	***1-3 ամիս***	***3-6 ամիս***	***6-12 ամիս***	***1 տարուց ավելի***		
1.	**Կանխիկ և կանխիկին հավասարեցված դրամական միջոցներ,**	-	-	-	-	-	-	-

	մնացորդներ Կենտրոնական բանկում							
2.	**Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ**	-	-	-	-	-	28 731	28 731
3.	**Հաճախորդների նկատմամբ պահանջներ**	2 252	-	-	-	-	-	2 252
4.	**Արժեթղթեր, այդ թվում՝** **- շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող** **- վաճառքի համար մատչելի** **- մինչև մարման ժամկետը պահվող** ***-ռեպո***	-	-	-	-	5 324 169 3 857 929	-	5 324 169 3 857 929
5.	**Այլ պահանջներ**	72	-	-	10 718	-	-	10 790
6.	**Հետհաշվեկշռային պայմանական ակտիվներ**	-	-	-	-	-	-	-
7.	**Պայմանագրային պահանջներ**	-	-	-	-	-	-	-
8.	***Ընդամենը***	**2 324**	**-**	**-**	**10 718**	**9 182 098**	**28 731**	**9 223 871**

	ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	***Մարմանը մնացել է***					***Անժամկետ***	***Ընդամենը***
		մինչև 1ամիս	***1-3 ամիս***	***3-6 ամիս***	***6-12 ամիս***	***1 տարուց ավելի***		
1.	**Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ**	8 027 656	-	-	-	-	-	8 027 656
2.	**Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ**	-	-	-	-	-	-	-
3.	**Պարտավորություններ ներդրումային ընկերության կողմից թողարկված արժեթղթերի գծով**	-	-	-	-	-	-	-
4.	**Այլ պարտավորություններ**	13 851	-	-	-	16 982	-	30 833
5.	**Հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններ**	-	-	-	-	-	-	-
6.	**Պայմանագրային պարտավորություններ**	-	-	-	-	-	-	-
7.	***Ընդամենը***	**8 041 507**	**-**	**-**	**-**	**16 982**	**-**	**8 058 489**

Նախորդ ժամանակաշրջան

	ԱԿՏԻՎՆԵՐ	Մարմանը մնացել է					Անժամկետ	Ընդամենը
		մինչև 1ամիս	1-3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1 տարուց ավելի		
1.	Կանխիկ և կանխիկին հավասարեցված դրամական միջոցներ, մնացորդներ Կենտրոնական բանկում	-	-	-	-	-	-	-
2.	Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	-	-	-	-	32 241	32 241
3.	Հաճախորդների նկատմամբ պահանջներ	1 105	-	-	-	-	-	1 105
4.	Արժեթղթեր, այդ թվում՝ - շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող - վաճառքի համար մատչելի - մինչև մարման ժամկետը պահվող -ռեպո	-	-	-	-	5 196 253 3 772 242	-	5 196 253 3 772 242
5.	Այլ պահանջներ	65	-	-	10 558	-	-	10 623
6.	Հետհաշվեկշռային պայմանական ակտիվներ	-	-	-	-	-	-	-
7.	Պայմանագրային պահանջներ	-	-	-	-	-	-	-
8.	***Ընդամենը***	**1 170**	**-**	**-**	**10 558**	**8 968 495**	**32 241**	**9 012 464**

	ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Մարմանը մնացել է					Անժամկետ	Ընդամենը
		մինչև 1ամիս	1-3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1 տարուց ավելի		
1.	Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	7 892 146	-	-	-	-	-	7 892 146
2.	Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	-	-	-	-	-	-	-
3.	Պարտավորություններ ներդրումային ընկերության կողմից թողարկված արժեթղթերի գծով	-	-	-	-	-	-	-

4.	**Այլ պարտավորություններ**	2 481	-	-	-	9 791	-	12 272
5.	**Հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններ**	-	-	-	-	-	-	-
6.	**Պայմանագրային պարտավորություններ**	-	-	-	-	-	-	-
7.	***Ընդամենը***	**7 894 627**	**-**	**-**	**-**	**9 791**	**-**	**7 904 418**

«Պայմանագրային պահանջներ» տողում լրացվում են դեռևս չհաշվեգրված (հաշվեկշռում կամ հետհաշվեկշռում չարտացոլված), սակայն պայմանագրով նախատեսված ստացվելիք բոլոր գումարները (այդ թվում՝ տոկոսագումարները)՝ ըստ պայմանագրով նախատեսված մարման ժամկետների:
«Պայմանագրային պարտավորություններ» տողում լրացվում են դեռևս չհաշվեգրված, սակայն պայմանագրով նախատեսված վճարվելիք բոլոր գումարները (այդ թվում՝ տոկոսագումարները)՝ ըստ պայմանագրով նախատեսված մարման ժամկետների:

Առաջացող ճեղքվածքն Ընկերության կողմից կֆինանսավորվի ինչպես բանկային հաշիվներին առկա բացարձակ իրացվելիությամբ բնութագրվող դրամական ռեսուրսներով (մոտ 34 մլն. ՀՀ դրամի չափով), այնպես էլ կնքվող ռեպո-համաձայնագրերի ժամկետների երկարաձգմամբ և/կամ նոր ռեպո-համաձայնագրերի կնքմամբ (ավելի քան 8 005 մլն. ՀՀ դրամի չափով):

Ծանոթագրություն 33. «Կապիտալ և կապիտալի համարժեքություն»

Ընկերությունը պահպանում է ակտիվ կառավարվող կապիտալի կառուցվածք ներդրումային գործունեությանը բնորոշ ռիսկերը ծածկելու համար: Ընկերության կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են համոզվել, որ Ընկերության կապիտալը համապատասխանում է հաստատված պահանջներին, և որ Ընկերությունը պահպանում է առողջ կապիտալի ցուցանիշներ՝ իր գործունեությունն ամրապնդելու և մասնակիցների շահույթն առավելագույնի հասցնելու համար:

Ընկերության կապիտալի համարժեքությունը վերահսկվում է օգտագործելով ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված կանոնները և նորմատիվները: 31.03.2026թ. դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից ներդրումային ընկերության ընդհանուր կապիտալի նվազագույն չափ է սահմանվել 300 մլն. ՀՀ դրամը, իսկ կանոնադրական կապիտալինը՝ 1 մլն. ՀՀ դրամը: Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությունը կատարել է կապիտալի մակարդակի համար սահմանված բոլոր նորմատիվային պահանջները, ինչի մասին են վկայում ստորև ներկայացված աղյուսակի տվյալները.

հազ. ՀՀ դրամ

2026թ. ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԱՄԻՍՆԵՐ	ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ (նորմատիվային մեծություն)	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼ (նորմատիվային մեծություն)	ՀՀ ԿԲ ԿՈՂՄԻՑ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼԻ ՆՈՐՄԱՏԻՎ
Հունվար	783 375.0	1 091 982.0	300 000.0
Փետրվար	796 181.0	1 194 272.0	300 000.0
Մարտ	850 002.0	1 110 793.0	300 000.0

Ծանոթագրություն 34. «Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեք»

Ընկերության կողմից կիրառվող ֆինանսական գործիքների ճանաչման և չափման մոտեցումները, ֆինանսական գործիքի յուրաքանչյուր դասի իրական արժեքի գնահատման եղանակները մանրամասն բացահայտված են «Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը» Ծանոթագրություն 2-ի 6), 8), 9) և 15) կետերում:

Ծանոթագրություն 35. «Կանխատեսվող ապագա գործարքների հեջավորում»

Ընկերությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ չունի այնպիսի ֆինանսական գործիք, որը հաշվառվում է որպես կանխատեսված ապագա գործարքների հետ կապված ռիսկերի հեջ:

Ծանոթագրություն 36. «Ապաճանաչում»

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվի մի մասն այն և միայն այն դեպքում, երբ կորցնում է վերահսկողությունը պայմանագրային իրավունքների նկատմամբ, որոնք կազմում են այդ ֆինանսական ակտիվը (կամ ֆինանսական ակտիվի մի մասը): Ընկերությունը կորցնում է այդ վերահսկողությունը, եթե այն իրացնում է պայմանագրով սահմանված օգուտների նկատմամբ իրավունքները, իրավունքների ուժի մեջ լինելու ժամկետը լրանում է կամ Ընկերությունը հրաժարվում է այդ իրավունքներից:

Ընկերությունը չի կորցնում վերահսկողությունը փոխանցված ֆինանսական ակտիվի նկատմամբ, և, հետևաբար, չի ապաճանաչում ակտիվը, եթե Ընկերությունը պարտավոր է հետ գնել փոխանցված ակտիվն այնպիսի պայմաններով, որոնք ստացողին՝ փոխանցված ակտիվի դիմաց ստացված ակտիվների գծով գործնականում ապահովում են փոխատուի հատույցին հավասար հատույց: Փոխատուի հատույցը այն հատույցն է, որն էականորեն չի տարբերվում այն մուտքերից, որոնք կարող էին ստացվել փոխանցողին տրամադրված փոխառությունից, որն ամբողջապես ապահովված է փոխանցված ակտիվով: Ընկերությունն ընդհանուր առմամբ կորցնում է փոխանցված ֆինանսական ակտիվի նկատմամբ վերահսկողությունը միայն այն դեպքում, երբ այդ ակտիվը ստացողն ունի փոխանցված ակտիվից օգուտները ստանալու կարողություն: Այդ սկզբունքներից ելնելով՝ Ընկերությունը չի ապաճանաչում ռեպո-համաձայ-նագրերով վաճառված արժեթղթերը՝ դեբետագրելով դրանք 133-րդ, 134-րդ կամ 143-րդ բաժնի (Կենտրոնական բանկերին և ֆինանսական կազմակերպություններին (ֆինանսական կազմակեր-պություն չհանդիսացող անձանց) ռեպո համաձայնագրերով վաճառված վաճառքի համար մատչելի (մինչև մարման ժամկետը պահվող) արժեթղթեր) համապատասխան հաշիվների հետ:

Ծանոթագրություն 37. «Գրավադրված ակտիվներ»

Հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ Ընկերությունը չունի գրավադրված ակտիվներ:

Նախորդ ֆինանսական տարվա վերջի դրությամբ Ընկերությունը նույնպես չուներ գրավադրված ակտիվներ:

Ծանոթագրություն 38. «Ընդունված գրավ»

Ընկերությունը 31.03.2026թ.-ի, ինչպես նաև նախորդ ֆինանսական տարվա վերջի դրությամբ, չունի որպես գրավ ընդունված ակտիվներ:

Ծանոթագրություն 39. «Պարտավորությունների չկատարում/խախտում»

Ինչպես հաշվետու ժամանակահատվածում, այնպես էլ նախորդ ֆինանսական տարվա վերջի դրությամբ, Ընկերության կողմից չի խախտվել պայմանագրային ոչ մի պարտավորություն: